Հեղցի՛ ի սեղան զոհ աւանակին։
Օր տարաժամեալ մերձ ի մուտս արփին,
Ցամեսցէ՛ գիշեր պարզ, լիալուսին.
Ո՞չ փայլէ ուստեք կայծ քաղցրիկ լուսոյ,
Տալ հրահանգաց նշան ինչ լուսոյ.
Սիւնն ամպեղէն կազմեալ ի տուէ,
Սոսկ քող սեաւթո՛յր շուրջ զմեօք սփռէ.
Եւ ի շամանդաղ, ի մռայլ ստուերս,
Բո՞ց ցայտեն յաչաց գայլ և բորենի։
Իսկ հետապնդեալ մեր հին Փարաւոն,
Բռնի՛ տայ մղոն դէպ ի Բաբելոն.
Խելամուտ զոլով բնաբոյս բերմանց,
Բարձրայօն ախտից սնափառ սիգութեանց.
Որ ցաւուրս մեր զերկս սուրբ Նախնեաց,
Անպատկառ զիմօք առ ոտն կոխեաց,
Մատնեալ Արդէայն ի մոռացութիւն,
Ոսկւո՞վ զուն գործի գնել փրկութիւն։
Տո՛ւր ժողովրդեան քում յաղթութիւն,
Անցի՛ւք ընդ այս ծով նոր մկրտութիւն.
Ո՛ւր զաղտ զազրալի՝ կեղ եգիպտական,
Կցէ փրկարար աննիւթս աւազան.
Բայց և ընդ նմին հսկեա հովուապար,
Զի որ ի Նեղոս տանջի վայրապար,
Մի՛ ի Տիգրիսին հուն ցնորական,
Գահավիժեսցի հոգւով գժտութեան։

Հեղինակ Հրաժեշտին Վարդանոյ։

# Ա Զ Գ Ա Յ Ի Ն

## ՈՒԽՏ.

Մեծ. Պարոնայք Սարգիս Գալստեան և Անտօն Մելքոնեան Թամբեանց՝ ինչպէս ի բազմաց հետէ ուխտ արած և ամ ըստ ամէ նուիրած են երկու ձիոց գները ի նպաստ պիտոյից Մայր Աթոռոյս, այս վերջին երկու տարուան ի հաշիւ չորս ձիոց գներն ևս ամենն մի հարիւր վաթսուն և երկու ռբլ. (162) 62 կպ. ընծայեցին և հաստուցին ի գանձարան Աթոռոյս ներկայ ամսոյս մէջ։

Գովելով յիշեալ Պարոնայից հոգևսէր եռանդը և բարեպաշտական ուխտից անթերի կատարումը, կխնդրեմք ընդունել մեր երախտագէտ և սրտաբուղխ շնորհակալութիւնքը ամսագրոյս միջոցաւ։

## ԱՒԱԶԱՆ ՋՐՕՐՀՆԵԱՑ.

Տփխիսեցի Մեծապատիւ Գէորգ Ն. Գարաճեանց և իւր ամուսին բարեպաշտուհի և Համեստ. Նատալիա տիկին՝ պատուական և նորաձև կիսարծաթեայ մի Աւազան Ջրօրհնեաց նուիրեցին Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի՝ յաւուր տօնի Ս. Ծննդեան և Մկրտութեան հանդիսում գործածելոյ համար ի յիշատակ իւրեանց։

Քանի՜ փափաքելի և անձկալի պէտք է լինի իւրաքանչիւր Աստուածասէր և կրօնասէր Հայկազնոյ՝ մէն մի յիշատակ ունենալ ի նոր Սիօն ի Ս. Տաճար Մայր Աթոռոյս, և որպիսի փառք և պատիւ և մխիթարութիւն է որոց յաջողի այսպիսի մի գեղեցիկ բարեպաշտական նուէր ընծայել, ինչպէս վերոյիշեալ երկու բարեպաշտ ամոլաց արժանացոյց Տէր արդեամբք իւրեանց ընծայաբեր լինել Ս. Տաճարիս Էջմիածնի, և երանել ըստ այնմ թէ՝ "Երանի որ ունիցի զաւակ այս ինքն յիշատակ ի Սիօն". և այսպիսիք ո՞չ ապաքէն առաւել մեծ գովեստից արժանի են՝ որ մահկանացու գոլով և յաւիտենականին ցանկալով՝ միանգամայն լցին զպէտս Ս. Էջմիածնի Տաճարիս։

Իսկ մեք հրապարակաւ կփութամք յայտնել յիշեալ ազնիւ նուիրատուաց մեր խորին զգացմանց և շնորհակալեաց հաւատիքը։

## Պ. ԱՂԱՅ ԱՂԱՅԵԱՆՑ.

Ի նպաստ պիտոյից նորակառոյց Ճ՚եմարանի Մայր Աթոռոյս վ՞ հարիւր ռուբլի նուիրեց Մեծ. Պարոն Աղայ Աղայեանց Գանձակեցի ի ձեռն Երժ. Գրիգոր Վարդապետի Տէր-Աստիփանոսեանց փոխանորդի Գանձակայ։

Կգովեմք յիշեալ բարեպաշտի ուսումնասիրական խանդը և եռանդը, և մեր հրապարակական շնորհակալութեանց հաւատիքը կմատուցանեմք նմին։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն)

### Ի ԴԱՐԲԱՆԴ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Շակումեանց . . . . . . . , . . . | 3 | |
| Գէորգ Շահնազարեանց Դէ Շափուր Երևանցի . . . . , . . . . . | 10 | |
| Ղուկաս Ատաքելեան . . . . , . . | 1 | |
| Ռափայէլ Արտէմեան Իշխանեանց . . | 1 | |
| Ստեփան Գիւլնազարեան . . . . | 1 | |
| Գալուստ Միրանցեանց . . . . . | | 40 |
| Եղիսաբէթ Սպանդունեան . . . . | 1 | |
| Աբրահամ Քահանայ Սպանդունեանց | 1 | |
| Մարկոս Գիւլնազարեան . . . . | 1 | |

### Ի Ղօշանլու գաւառէն։

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Այփաւուտ գեղջ . | | 40 |
| Հասարակութիւն Քեալախի գեղջ . | | 50 |
| Հասարակութիւն Խանի-շէն գեղջ . | 1 | |
| Հասարակութիւն Տարաքարքանջ գեղջ | 1 | |
| Հասարակութիւն Մատրասայ գեղջ . | 2 | |
| Հասարակութիւն Գիւրջեվան գեղջ . | 1 | 17 |
| Հասարակութիւն Հնղար գեղջ . . . | 1 | |
| Հասարակութիւն Կիւրտայ գեղջ . . | | 40 |
| Բիլիստանցի Օհան Տօտիեանց . . . | | 20 |
| Հասարակութիւն Բիլիստան գեղջ . | 1 | |
| Ջարկարանեցի Աղասի Ծատուրեան . | 1 | |

### Ի Լոռէջու գաւառէն։

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Հասարակութիւն Դակմատաղլու գեղջ | | 20 |
| Բաքի շինացի Հայրապետ Աւագեան . . | | 40 |
| ,, Մարտիրոս Գրիգորեան . | | 20 |
| ,, Պետրոս Խաչատրեան . . | | 20 |
| ,, Յարութիւն Խաչատրեան . | | 20 |
| ,, Հայրապետ Ալլահվերտեան | | 20 |
| ,, Ռուստամ Սարգսեան . . | | 20 |
| Գանձակեցի Պաղտասար Պետրոսեան . | | 20 |
| ,, Միքայէլ Պետրոսեան . . | | 20 |
| ,, Յարութիւն Պաղտասարեան | | 10 |
| ,, Դաւիթ Գասպարեան . . | | 10 |
| ,, Յովհաննէս Արղանեանց . | | 10 |
| ,, Գրիգոր Դաւթեան . . . | | 10 |
| ,, Գէորգ Յովսէփեան . . | | 5 |
| Հասարակութիւն Քեշխուրդ գեղջ . | 2 | |
| Հասարակութիւն Քեալբանդ գեղջ . | 1 | |
| Հասարակութիւն Գիրք գեղջ . . . | 1 | |
| Հասարակութիւն Կիւրջեւան գեղջ . | | 50 |
| Հասարակութիւն Փաթաքլու գեղջ . | | 60 |
| Հասարակութիւն Շիւքիւրչի գեղջ . | | 40 |
| Հասարակութիւն Աշղ-բայրամ գեղջ | | 60 |
| Հասարակութիւն Ուչտալ գեղջ . . | | 50 |
| Հասարակութիւն Ռուշանաշէն գեղջ . | 1 | 60 |
| Վանքաշինացի Սարգիս Յարութիւնեան | | 30 |
| ,, Խաչատուր Մարութեան . | | 20 |
| ,, Խաչատուր Գալստեան . | | 20 |
| ,, Ստեփան Յովսէփեան . . | | 20 |
| ,, Պօղոս Գրիգորեան . . | | 20 |
| ,, Աբրահամ Հայրապետեան | | 20 |
| ,, Յարութիւն Սահակեան . | | 20 |
| ,, Յարութիւն Գէորգեան . | | 20 |
| Բողաւանդեցի Բաղդի Աւետիսեան . | | 10 |